

իւր վարչական անձանց պատճառաւ պալ-
քանեան երկրորդ պատերազմին մէջ...

* *

Մակեդոնիա, — ուր հռովմէական կայ-
սրութեան բաղդը վճռուեցաւ անգամ մը
երբ Բրուտոս Ֆիլիպէի մէջ իյնալով ար-
տասանեց հռչակաւոր խօսքերը՝ հարցնե-
լով թէ արդեօք ստուգիւ առաքինութիւնը
սին անոն մ'է — նորէն կացութեան ճշ-
մարիտ բանալին է, Եւ իսկապէս ներկայ
պատերազմին ալ հետաւոր պատճառն է,
յետ ամբողջ կէս դար եւրոպական դիւ-
նագիտութեան բանակցութեանց յարատե
նիւթն ըլլալու: Պետլինի Ժողովին մէջ
զոհուելով թուրքիոյ, լաւագոյն բաղդ մը
չունեցաւ ուրիշ դաշնադրութեան մէջ,
այս է Պուրքարեանի դաշնադրութեան մէջ,
որուն պայմանները դրուեցան միակ նպա-
տակով մը՝ զՊուլկարիան կատարելապէս
ջախջախելու: Նոյն իսկ անոնք որ այս
դաշնադրութեան հեղինակն եղան, հիմայ
կը ճանչնան իրենց սխալը, և պզտիկ
արդիւնք չէ ծերունի Բագիչին համար, —
ինչպէս որ կ'ըսուի Պիկրատի մէջ, —
իւր ժողովուրդն համոզած ըլլալը որ Սեր-
պիոյ օգուտը զոհեր կը պահանջէ և թէ
մի միայն պալքանեան միութիւնը կրնայ
այդ թերակղզւոյն պետութեանց նկատ-
մամբ ազատութիւնն ու անկախութիւնն
ապահովել:

Vico Mantegazza

Corriere della Sera 1 Սեպտ. 1915

— Նա որ խորին իմաստներ ունի, կը
ջանայ պայծառ արտաբերել, ընդհակա-
ռակն նա որ կ'ուզէ խորիմաց երևնալ
բազմութեան, կը ջանայ խրթին ըլլալ:
Նիցիէ

— Ով որ կ'աղօթէ սուրբ է, բայց նա
որ կը գործէ, աւելի սուրբ:

Յ. Բասթրի

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ ՓՇՐԱՆՔ

Բրոֆ. A. Meillet Փաղղիոյ Լեզուագիտա-
կան Ինստիտուտեան ֆիլապոսոփաբոց մէջ
(Mémoires de la Société de linguistique
de Paris, Tome XIX.e fasc. 3e, 1915, յէջ
178-180) կը հրատարակէ հետեւեալ ուսու-
մասիրութիւնը:

Լատինական *piluit* եւ հայերէն *հեղում*

Չափազանց սկեպտականութիւն է յայ-
տարարելն որ հայերէն *հեղում* (je verse)
բառի ստուգաբանութիւնը մթին է, ինչ-
պէս կ'ընէ Պ. Brugmann (*Grundriss*,
II^e, 3, § 102 էջ 156): Լիթուաներէն
pilù (je verse) բառի հետ համեմատու-
թիւնը կատարեալ է թէ՛ ըստ իմաստին և
թէ՛ ըստ ձևոյն, և Պ. Pedersen (K. Z.
XXXIX. 354) հայերէն *դ-ը* մեկնելով
իրեւ հին — *լո* — մը վերցուցած է բոլո-
րովին այն միակ զօնաբանութիւնը որ վե-
րոյիշեալ համեմատութեան մէջ կը զրտ-
նուէր. այս ձայնական մեկնութիւնը սա-
կայն բացայայտ է. *լ* բաղաձայնի առջև
հայերէնի մէջ կու տայ *դ*. — *դն* — բնա-
կանաբար եղած է — *դդ* —, որ յետոյ պար-
զուած է ի միակ *դ*, որովհետև հայերէնը
բաղաձայններու կրկնութիւնը չընդունիր:

Հեղում բառը կղզիացած բառ մը չէ
հայերէնի մէջ. բաց ի բայածանց *գ-հղում*
(je fais couler) — էն, ունինք նաև կրկնակ
ձևը *հեղեղ* (torrent), և հայերէնի մէջ
զեռ աւելի հազուադէպ դէպք, արմատա-
կան է — *թ* առտիճանաւ ձևին քով ունինք
օ — *Օ* աստիճանի ալ խառնացուցիչ սղորդմ,
սղորդանմ (j'inonde) բառերու մէջ. (եղեկ.
ԺԳ. 11-13. Եսայի ԻԲ. 2. Եղեկի 1,
2, էջ 10, և այլն): Իսկ ինչ որ կը վե-
րաբերի բառակիզը *հ-ի*, մի և նոյն յա-
րաբերութիւնը կայ ընդ մէջ *հեղեղ* և ու
ղղեմ բառերու: Ինչ որ կայ ընդ մէջ *հետ*
(trace de pas) և ոտն (pied) բառերու:
Պ. Pedersen ապացուցած է որ հայերէն
հ, հնդեւրոպ. *ք* — էն ծագած, ենթակայ է
կորսուելու *օ* — ի առջև (K. Z. XXXIX.

370). յիրաւի. դիւրաւ կ'ըմբռնենք որ μ -էն ծագած շրթնային f համարացած ըլլալ յաջորդ o -ի մը առջև, * f - h ի փոխանցուելէն առաջ:

Ինչպէս որ դիտել կու տայ Պ. P. Persson (*Beiträge z. indog. Wortforschung*. էջ 749) լատ. *pluit*, Լիթ. *pilù* և հայերէն հեղում-ի մէջ կըլծ համեմատութիւնը պահելի է. սանսքրիթ *palvalani* (marais) և լատին *palus* կը վկայեն արմատին նախնական ընդարձակումը **pelu* - ձևի գոյութեան, որուն անգային միջնածանցով ներկային ձևն է **pelnu* - որ անտարակոյս հնագոյն **plnu* - մը կը փոխանակէ կատարեալի (aoriste) ազդեցութեան ներքև, ինչպէս որ կը ցուցնէ հայերէն հեղի (*j'ai versé*) կատարեալը: Պէտք չէ նոյնացնել լատիներէն *pluit*-ը սանսքրիթ *právala*, *plivate* (il flotte), յունարէն $\pi\lambda\acute{\epsilon}\omega$, հին սլաւերէն *plovo*, ինչպէս թոխար. B. *plewe* (bateau)' բառերու հետ: Իմաստները չեն համապատասխաներ իրարու, և բոլորովին կամայական է ըսելը, ինչպէս սովորութիւն է յաճախ (օր. համար ա. մենէն վերջ Brugmann *Grundriss* II², 3, էջ 117. §. 70, 1) որ *pluit* ծագած է **plouit*-է, բայածանց ձևերու ազդեցութեամբ, ինչպէս *impluit*, *perpluit*, ևայլն: Առ այս կարծած են իրաւունք ունենալ *plouebat*-է մը զոր կը կարգանք Բեդրոնիոսի բով, և *perplouere*-յէ որ կը գտնուի փեստոսին յիշատակած *formule* տարագի մը մէջ. բայց բնաւ ձայնարանական արժէք չունի o -ի մը նշանակուիլը փոխանակ $\ddot{u}$ -ի u -ի մ'առջև որ համագոր է v -ի (Հմտ. Niedermann, *Mélanges F. de Saussure* էջ 58 և յաջորդը. L. Havet, *Manuel de critique verbale* §. 914). Բայց աստի հնագոյն ձևն կատարեալի է *pluit* u -ով (Հմտ. Neue-Wagener, *Formenlehre* III. էջ 407 և յաջորդները), և այս անբժ-

բոննիլի պիտի ըլլար եթէ մեկնէինք ներկայի **plouit* ձևէ մը: Արմատական ձևերու այս երկուութիւնը **pelə* - որուն վրայ կը յենու լիթ. *pilti* (verser) և **pelu* - որուն վրայ կը յենուն հայերէն հեղում և լատիններէն *pluit*, համեմատելի է **sterə* -, **steru* - (*étendre*) ձևերու որոնցմէ ունինք միանգամայն սանսքրիթ *strnati*, լատիններէն *sterno* և սանսքրիթ *strnōti* և յունարէն $\sigma\tau\acute{o}\rho\nu\mu\iota$.

Արմատական ձևն **pelu* անտարակոյս յառաջ կը բերէր *athématique* ներկայ մը, որ ոչ մէկ կողմ պահուած չէ, Հայերէնը զայն փոխանակած է միջնածանցով ձևով մը **pelnu* - յորմէ հեղում. լատիններէն *pluit* կը ներկայացնէ ըլլալ **pluwe*, որ կը ծագի *thématique* տիպարի մ'անցքէն, ըլլալ **pluye*. Լիթուաներէնն ունի *plāju*, *plauti* (verser de l'eau pour laver), յունարէնն ունի $\pi\lambda\acute{\upsilon}\omega$. գերմանականին մէջ կը գտնուի՝ հին բարձր գերմաներէնի՝ *flawen*, *flewen* (laver, rincer) պատճառիչ - կրկնակ ձևը: Ինչպէս որ **gīheu* (verser) *thème*-ին վրայ - որ յունարէնի մէջ կը հանդիպի $\xi\chi\epsilon\alpha$, $\xi\chi\upsilon\sigma\tau\omicron$ կատարեալով, որուն համապատասխան սանսքրիթի մէջ ունինք կրկնութեամբ ներկայն *juhōti* (il sacrifie), - հաստատուած է - *d* - ընդլայնմամբ, գոթական *giutan* և լատիններէն *fundo* (*fudi*), այսպէս ալ **pleu* - ձևի վրայ հաստատուած է գերմանական *thème*-ն ճիշտ համապատասխան գոթական *giutan*-ի այսինքն. հին-իւլ. *fljóla*, հին-անգլ. *fleotan*, հին բարձր գերմաներէն *fliozan* (couler). Լիթուանականն ալ ունի մի և նոյն ընդլայնմամբ *plaudžiu*. *plauisti* (laver) և *plūstu*, *plūdan*, *plūsti* (couler, déborder):

Լուալու (laver) իմաստը որ հոս յիշուած շատ բառերու մէջ կը հանդիպի, կ'երևի մի և նոյն արմատի սանսքրիթ խումբ մը բառերու մէջ, այս է *palp-láyati* (il lessive). այս բայիս u -ի երկայն քանակութիւնը յառաջ կու գայ պատճառական զօրութիւնէն: Այս կրկնակ

1. Զէ մը զոր հաղորդած է Պ. S. Levi.

ձևը յիշել կու տայ անմիջապես հայերէն հեղեղ, ողորեմ վերոյիշեալ ձևերը:

* *Pela* — կրկնական արմատի այն ձևը՝ յորում երկրորդ ձայնաւորն է երկարը, կը գտնուի հին-իւլ. *flōa*, հին-անգղ. *flōcan* (couler) և գոթական *flodius*, հին-իւլ. *flōð*, հին բարձր գերմաներէն *fluot* (courant) բառերու մէջ:

Կը թուի թէ **pela* — արմատը բնիւայնութեան ունեցած է: Կան բազմաթիւ ձևեր — *d* — ով. օր. յունարէն *πλάζος*, հային. (հմտ. *Lidén, Stud. z. altind. Sprachgesch.* 49 և *P. Persson, Beitr.* 878). և ձևեր — *k* — ով. օր. լիթւան. *pélké*, լիթեան *plazis* (marais) հային. (հմտ. *P. Persson, Beitr.* 237 և 878): Այսու կրնանք բացատրել հին-սլաւ. *plakati*, փորը-ռուս. *polokaty*, լիհ. *plokac* (laver), ինչպէս նաև հին-սլաւ. *plaska-ti*, ռուս. *полоскать* բառերը:

Յաճախ հարցուած է թէ հոս ուսումնասիրուած բառերու խումբը որ ճիշտ կը նշանակէ verser un liquide, laver (surtout à grande eau) պէտք է արդեօք համեմատուի թէ ոչ, յուն. *πλέω* խումբին հետ մէկ կողմանէ, միւս կողմանէ ալ յուն. *πλῆγγος* խումբին հետ: Անտարակոյս այս հարցման որոշ պատասխան մը չկայ:

* *

Սոյն այս պրակիս մէջ հայագիտական յօդուած մ'ալ կը հրատարակէ Robert Gauthiot, երկու մասանց բաժնուած, I. A propos des mots parthes empruntés par l'arménien և II. A propos de l'arménien *նկան* — *nkan* = pain, որոնց վրայ ուրիշ առթիւ կ'ուզենք վերադառնալ: Հոս յիշատակենք, — կարեոր կէտերը քաղելով, — prof. Meillet-ի ուրիշ մէկ ուսումնասիրութիւնը, որ այս մի և նոյն պրակիս մէջ հրատարակուած է և որ կարեւոր դիտողութիւններ կը պարուանակէ հայկական տառերու արտասանութեան և մեր բանասիրաց մէջ այնքան

ծեծուած տառադարձութեան խնդրոյն ներկատմամբ: Յօդուածին նիւթն է ընդհանուր յունարէնի և հնդեւրոպական լեզուաց մէջ քաղածայններու ձայնադիտութիւնն, *Sur l'histoire des consonnes en grec* վերնագրի տակ: Հոս ի մէջի այլոց, հայերէնի նկատմամբ և ի յարաբերութեան ուրիշ հնդեւրոպական խումբերու, կը գրէ *A. Meillet*. Tout grand groupe de changements doit se ramener à un principe simple, qui est souvent découvrable. Ainsi la mutation consonantique du germanique ou de l'arménien résulte d'un changement fondamental dans le comportement de la glotte pour l'articulation des occlusives: les occlusives indo-européennes étaient assurément du type des occlusives romanes ou slaves; durant l'implosion des sourdes simples, la glotte fermée ne laissait pas passer l'air, et l'explosion de *p*, *t*, *k*, n'était suivie d'aucune expulsion d'air notable précédant la voyelle, d'aucune « aspiration »; les vibrations glottales des sonores commençaient dès l'implosion des sonores *b*, *d*, *g*; en un mot, les occlusives se prononçaient à glotte fermée. Les changements germaniques et arméniens des occlusives indo-européennes s'expliquent par le fait que les sourdes se sont au contraire prononcées avec la glotte ouverte durant l'implosion, et par suite avec un souffle suivant l'explosion, et que les vibrations glottales qui caractérisent les sonores ont commencé après le moment de l'implosion, vers le moment de l'explosion: ce sont des occlusives à glotte relativement ouverte. — Même dans les langues où le changement a été moins radical, bien des changements s'expliquent de même; ainsi les changements

des consonnes intervocaliques des dialectes celtiques ou de l'araméen s'expliquent par la prononciation des occlusives à glotte relativement ouverte, qui est positivement attestée par divers faits pour ces deux langues, այսինքն կեղտական խումբի և արամայականի. կեղտականը կ'ապացուցանեն հիմակուան հնչմանց և արտաբերու. թեան նկատմամբ կատարուած դիտողու. թիւնները, իսկ արամայականը կը հաստատեն հայկական փոխառութիւնը: Յետոյ կ'անցնի հետազոտելու այս երկոյ. թին պատճառները և կ'ըսէ. Une transformation aussi grave que celle-là n'a guère de chances de se produire spontanément; on est en général porté à l'expliquer par le fait d'un changement de langue chez telle ou telle population; en ce qui concerne l'arménien, dont le système des occlusives est identique à celui du caucasique méridional, cette explication semble évidente. Pour le germanique ou le celtique, les données historiques manquent. Այս հիման վրայ կը շարունակէ ցուցնելու յունարէնի մէջ ալ ըստ զանազան ժամանակաց և զանազան գաւառաց բաղաձայններու կրած ձայնա. փոխութիւնները, և այս դիտողութիւնը կրնան շատ օգտակար և հրահանգիչ կերպով նկատի առնուիլ մեր տառադարձականներու կողմանէ:

Յատուկ յիշատակութեան արժանի կէտ մ'է մասնաւորապէս հետեւեալ դիտողու. թիւը զոր կ'ընէ յէջ 170. Mais la remarque faite sur le passage de *s* à *h* donne lieu à une autre observation. Outre le grec et l'iranien, le même passage a eu lieu en arménien et dans le groupe britannique des langues celtiques... Յետոյ իւր դիտողութիւնները կը յատկացնէ հայերէնի, որուն նկատմամբ կը շարունակէ. L'histoire assez compliquée, des

anciennes occlusives en arménien est toute dominée à la fois par la mutation initiale, qui a consisté dans le changement de la manière de fonctionner de la glotte, et par l'affaiblissement de l'articulation. Le *p*, en vertu de sa débilité propre, a passé à *h* à l'initiale et à zéro devant la voyelle *o*, ainsi dans ոտն (pied) à côté de հետ (trace de pas) et dans ողողեմ (j'imonde) à côté de հեղեղ (déluge) et de հեղում (je verse) et s'est sonorisé en *w* (*v*) en position intervocalique ou devant consonne. Le *t* tend en général vers *th*, au moins à l'initiale, devant voyelle; mais dans les mots accessoires, en ces mêmes conditions, il se sonorise, et l'on a *d* dans դու (toi) (souvent inaccentué et postposé), դա (celui-là); entre voyelles, le traitement est obscur; mais il y a passage à *y* en de nombreux cas, tels que բերէ (berè de *berey il porte) cfr. skr. *bhārati*; բայ (bay parole), cfr. grec. φάτις; լու (lu de *luy connu), cfr. gr. κλυτός, etc. Même après *n*, l'amuïssement a lieu et, tandis que արդ (maintenant) répond à grec. ἄρτι, c'est բերեն (beren ils portent) qui répond à skr. *bhāranti*, dor. φέροντι, et c'est քսան (khsan vingt) qui répond à zénde *visaiti*, dor. - béot. Φίλατι; երեսուն (eresun trente) qui répond à gr. τριάκοντα, etc. Le *h* passe à *kh* à l'initiale, ainsi dans բերեմ (kherem je gratte) et à l'intervocalique, (ainsi dans ելիք (elikh il a laissé), cfr. gr. ἔλιπε); mais il suffit qu'il s'agisse d'un mot accessoire et que, par suite, l'affaiblissement soit plus accusé, pour que ce *kh* passe à *h* et même à zéro: en face de քան (khan que), քանի (khani combien), on a ով (ov qui), ոք (o-kh), adjectif indéfini valant gr. τίς; l'h -,

qui manque toujours devant l'o de ու, որ (ov, okh), apparaît encore devant i dans le datif հիմ (him à quoi). Devant une autre consonne, on sait, par la comparaison des langues déjà citées, que les occlusives faibles par nature s'altèrent; en arménien, elles se sont souvent amuies, ainsi à l'initiale, où երեք (erekh trois) répond à gr. τρεις, լու (lu connu) à grec κλυτός; երեց (erēc ancien) à latin *priscus*, etc.; ou bien il y a eu passage à la prononciation spirante, ainsi quand le génitif-datif հայր (havr du, au père) répond à latin *patris*, *patri* ou քուն (khun sommeil) de *khovon à skr. *śrāpnah*; ou bien il y a eu métathèse, ainsi pour les anciennes sonores aspirées dans des mots comme սուրբ (surb saint). En aucun cas, une occlusive commençant un groupe de consonnes n'a subsisté en arménien à sa place ancienne.

Դիտումամբ այս վերջին դիտողութեանց, ուր մեծապ. Ուս. կը ջանայ իւր տեսութեանց նեցուկ մը տալ օտար լեզուախումբերու համեմատութեամբ, պատշաճ կը համարինք դիտել տալ որ ամէն անգամ այս համեմատութիւնք և անոնցմէ հանուած եզրակացութիւնք շատ լաւ հիմնուած չեն. այսպէս օրինակի համար ու՛րք և հիմ-ի յարաբերութիւնը սխալուած է քանի որ երկու զատ դերանուններ ունինք աստ արմատական որիչ ու և ի տառերով:

Անոնցմէ վերջ կ'անցնի բաժանում մ'ը. նելու բոլոր յիշատակած դէպքերուն և կ'ըսէ. Les altérations initiales auxquelles sont dus les changements phonétiques sont, les unes, «*spécifiques*», propres à telle ou telle langue, les autres universelles, communes à l'ensemble des langues et en quelque sorte «*naturelles*»....

Aux tendances universelles et

«*naturelles*» s'opposent les changements «*spécifiques*» qui caractérisent telle ou telle langue: les mutations consonantiques en germanique, en arménien, et dans une moindre mesure, en celtique; l'affaiblissement de l'articulation en grec et en iranien (sans doute aussi en celtique et en arménien);... De même que les mutations consonantiques du germanique et de l'arménien, l'affaiblissement de l'énergie articuloire des consonnes grecques et iraniennes suppose que le grec et l'iranien sont de l'indo-européen parlé en partie par des sujets qui avaient des habitudes d'articulation différentes de celles en usage dans l'indo-européen. Այս դիտողութեամբ, լեզուականէն աւելի կարևոր ցեղագրական խնդիր մը կը լուսաբանուի մեր ազգին նկատմամբ, և կը հաւաստուի այս լեզուական հիմանց վրայ՝ որ հայք, գէթ մասամբ, կը պատկանին զանազան ցեղերու:

*
*

Քանի որ արդոյ Ուս. իս հայագիտական դիտողութիւններով զբաղեցանք, յիշատակենք իրեն ուրիշ մէկ տեսութիւն ալ (սոյն մի և նոյն պրակիս մէջ) De quelques présents radicaux athématiques յօդուածին մէջ, ուր հայերէնի նշանակումամբ հետեւեալ տողերը կը հանդիպինք. Le désaccord du vocalisme de gr. ὄζω et de lit. *uolziu* et la différence de formation de lat. *oleo* montrent que l'original de ces trois formes était une forme différente des trois, sans doute un présent radical athématique. L'arménien n'a de cette racine que des dénominatifs: հոտիմ (*hotim* aor. հոտեցայ *hotécay*) et la forme à redoublement հոտոտիմ (*holotem*, հոտոտեցի *hototeci*).

Հ. Յ. ԱՅԳԵՐ